041.0548.220616

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

22 հունիսի 2016 թվականի N 548-Ա

ՎՐԱՍՏԱՆԻ ՊԱՏԻԺՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ, ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ ԿԱԽԱ ԿԱԽԻՇՎԻԼԻԻ ԳԼԽԱՎՈՐԱԾ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՅՑԻ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թվականի հուլիսի 18-ի ՆՀ-174-Ն հրամանագրի 1-ին կետով սահմանված կարգի 121-րդ կետի 3-րդ ենթակետի՝

Վրաստանի պատիժների կատարման, պրոբացիայի և իրավական օգնության նախարար Կախա Կախիշվիլիի գլխավորած պատվիրակության 2016 թվականի հունիսի 29-ից հուլիսի 1-ը Հայաստանի Հանրապետություն այցի հետ կապված ընդունելության ծախսերը՝ 434.0 հազ. դրամի սահմաններում, կատարել Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեով արտասահմանյան պատվիրակությունների ընդունելության համար նախատեսված միջոցների հաշվին՝ համաձայն Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության ներկայացրած հաշվետվությունների:

ՍՏՈՐԱԳՐՎԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ
2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 22-ԻՆ